

Հարանց վարքէն : Երկրին մէջ մոռացութեան մատնուած էր բոլորովին հին հայկական վանքերու ներքին կարգերն եւ առհասարակ աւանդութիւնները : Կը դրէ Դաւրիժեցի թէ «կրօնաւորական զգեստ ամենեւին անհետ լեալ էր» (257) . իսկ քահանայք եւ արեղայք «միայն ի ժամ աղօթիցն զգենուին (սիրտն եւ վեղար) եւ զկնի արձակման ժամուն ի բաց եղեալ յինքեանց , իրրեւ զաշխարհականս չըջէին» :

Այժմ Սարգիս եպիսկոպոս եւ տէր Կիրակոս միախորհուրդ կազմեցին հետեւեալ սահմանադրութիւնը, զոր յառաջ կը բերէ Առաքել Դաւրիժեցի .

ա . Միայն կալ եւ ժուժկալել ի խցի :

բ . Լինել հնազանդ կամաց առաջնորդին (Հնազանդութիւն) :

գ . Ոչ լինել ումեք ստացուածք առանձին . այլ ամենայն ինչ հասարակաց լինել (Աղքատութիւն) :

դ . Պահել զմիտս եւ զխորհուրդս սուրբս յամենայն անմաքուր մտածութեանց հոգեկանաց եւ մարմնականաց (Ողջախորհութիւն) :

ե . Հանապազօր ի տարին պահօք անցուցանել, բաց ի շաբաթէ եւ ի կիրակէէ եւ ի տէրունական տօնից :

զ . Ի սպառ հրաժարել ի զինուոյ եւ ի մսոյ :

է . Յամենայն շաբաթ օր եւ ի կիրակի օր եւ ի տէրունական աւուրն զգիշերն պաշտամամբ անցուցանել մինչեւ ցառաւօտն :